

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիների դիմումների, բողոքների ու առաջարկությունների վերաբերյալ
/2016թ. 1-ին եռամսյակ /

1. Ստացվել են նամակներ ընդամենը որից՝	439
աջակցություն	448
առաջարկություն	2
հարցում	1
բողոք	9
այդ թվում՝	
կրկնակի	4
կուլեկտիվ	10
3. Ըստ հարցի բնույթի՝	
բնակարանային	3
կոմունալ-կենցաղային	11
շինարարական	6
արդձեռ/տրանսկապ/	-
գյուղատնտեսական	2
բնութ. պահպանութ	1
առևտրի	1
կենսաթոշակի և նպաստի	5
առողջապահության	61
կրթական և մանկ.հիմն	55
գիտութ.կուլտուրա	-
ֆինանսական	240
օրենսդրական	-
քաղ. և որդեգրման	-
աշխ.տեղ և հաշվառման	36
հողհատկացում և հողօգտ	2
միգրացիոն ծառ. վերաբերյալ	6
ապարատային	11
այլ հարցեր	11

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ Սյունիքի մարզպետարանում 2016 թվականի առաջին եռամսյակում քաղաքացիների ընդունելության և նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին

ՀՀ Սյունիքի մարզպետարանում 2016 թվականի առաջին եռամսյակում քաղաքացիներից ստացվել է 451 դիմում, որից 439-ը՝ աջակցության խնդրանքով, 9-ը՝ բողոք, 2-ը՝ առաջարկություն, 1-ը՝ հարցում:

Գյուղատնտեսական, կոմունալ-կենցաղային, բնակարանային, նպաստի և կենսաթոշակի հարցերի վերաբերյալ 10 դիմումներին տրվել է սպառիչ պատասխաններ: Աշխատանքի տեղավորման մասին 36 դիմումներից դրական լուծում է ստացել 6-ը, մյուսները վերցվել են հաշվառման: Միգրացիոն ծառայության վերաբերյալ 6 դիմումներից դրական լուծում է ստացել 2 դիմում:

Տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների իրավասություններին առնչվող 22 դիմումներ վերահասցեագրվել են համապատասխան համայնքների և կազմակերպությունների ղեկավարներին:

Նյութական օգնության խնդրանքով մարզպետին դիմած 240 քաղաքացիներից դրամական օգնություն է ցուցաբերվել 180 հոգու: Անվճար բուժսպասարկման հարցով դիմած 17 քաղաքացիներից բավարարվել է 15-ի խնդրանքը, 6 քաղաքացու տրվել է ծննդօգնության պետական հավաստագիր, 26 հոգու՝ առողջարանային ուղեգիր:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը: 2016 թվականի առաջին եռամսյակում կատարվել է 220 քաղաքացիների ընդունելություն:

Բացի այդ, մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ կատարվել են արտահերթ ընդունելություններ:

Մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում քաղաքացիների անհատական ընդունելությունը կազմակերպվել է ամենօրյա, աշխատանքային կարգով: